

տարի վր վերջը ամուսնանաք... տն-
րին առաջ ամուսնացողները իրա-
ւունք չունին պահանջելու... քննի-
րութիւնը ձեռք կը վճարէ 2000 ֆր.,
եթէ երկու տարի վերջը ամուսնանաք
2480 ֆր... հինգ տարի վերջը 3990
... տաս տարի վերջը 6320... քսան
տարի վերջը 11120 ֆր. եւ եթէ օրի-
որդ-հարսն ալ, իբրեւ անդամուհի
ընկերութեան՝ ըրել նոյնչափ մը՝
գումարը կը բարձրանայ 22240 ֆր-ի
—ասոր ինչ ըսիք:

Հակառակ պարագային եթէ ան-
գամ մը մեռնի առանց ամուսնանա-
լու, իր ընտանիքը իրաւունք ունի
ստանալ թէ՛ իրեն ամուսնութեան
առթիւ ստանալիք գումարը եւ թէ՛
100 ֆր-ի մասնաւոր գումար մը՝ թաղ-
ման ծախքերուն համար:

Իսկ ով որ քսան տարի անընդ-
հատ անգամ եղած է եւ կանոնաւոր
կերպով վճարած իր տուրքերը՝ որոշ-
ուած գումարը կը ստանայ կերպով պա-
րագային մէջ ալ, ամուսնանալ կամ
ոչ:

Ընկերութիւնը ամուսնութիւննե-
րու առթիւ վճարած գումարներէն
վար կը զնէ երբեւ լրացուցիչ տուրք
16 0/0 եթէ անգամը մէկ տարուան է,
10 0/0 եթէ երկու տարուան է, 6 0/0
եթէ երեք տարուան է, 3 0/0 եթէ
չորս տարուան է, իսկ անկէ անդին
լրացուցիչ տուրք չպահանջուի:

Ընկերութեան կրնայ անդամակ-
ցել ամէն անհատ որ կապրի Պուլկա-
րիս՝ առանց կրօնքի, ազգութեան,
հպատակութեան եւ սեռի խտրու-
թեան, բաւական է որ հինգ տարե-
կանէն վար չըլլայ. նոյնպէս ամէն
պուլկար, որ կապրի Պուլկարիոյ
սահմաններէն դուրս:

Հարկ է արդեօք ըսել, յօդուածս
չվերջացուցած, թէ ինչպէ՞ մը չէր
որ դրեցի, այլ ընկերութեան գեղե-
ցիկ սկզբունքներուն հանդէպ ունե-
ցած հիացումս էր որ զիս մղեց ամ-
փոփ տեղեկութիւն մը գտնէ տալ
Շարժում կարգացողներուն՝ բաղձա-
լով առիթ մը ընծայել անոնց օգ-
տուելու շատ արդուր ձեռնարկէ մը:

Տիգրան Աճեմեան

ՄԻՆԻ ԵՒ ՍԼԱՔ

Էրազմական յօդուածները գրու-
վում են հասարակութեան
համար որոշ խնդիրներ
և նիւթեր պարզելու նպա-
տակով, որպէսզի հասարա-
կութիւնը ու է բարոյական ու
մտաւոր օգուտ ստանայ: Այդ նը-
պատակով գրում են մանաւանդ
այն գրողները՝ որոնք մեծ մեծ
պահանջներ են դնում իրենց
ժողովրդի մամուլի տուժեւ և յա-
ւակնութիւն ունեն զժողովրդին
ընդդէմ ժամանակակից մամու-
լից:

«Շարժում»-ի մէջ կարգացի մի
շարք յօդուածներ, «Մինի» և
«Սլաք» ստորագրութիւններով:
Մինի խարազանում է հայ
կանանց անտարբերութիւնը դէ-
պի մտաւոր յառաջադիմութիւն
և ու է հասարակական գործ,
իսկ Սլաքը փոխանակ այդ դասն
իրողութիւնը շեշտելու և միջոց-
ներ առաջարկելու հայ կնոջը
ցնցելու համար, ծաղրում է Մի-
նիին, հոչակելով որ նրա յօդ-
ուածները ոչ մի կին չէ կարգում:

Մի խօսքով երկու յօդուածագ-
րերն էլ վերջի վերջը բուն խն-
դիրը մի կողմ թողած սկսում են
իրար ծակծակել: Սակայն Մինի
ընդունակութիւն է ունենում իր
վիճաբանութեան թելը չը կորց-
նել:

Յօդուածները կարգաւորուց յե-
տոյ այն, եղբակացութեանը ե-
կայ, որ գրողները տարբեր մի-
ջավայրի մարդիկ են, և Սլաքը
պատկանում է հենց այն միջա-
վայրին, որի գէժ ուղղված են
Մինիի եթէ ոչ սայրասուր սլաք-
ները գոնէ ճանկաւոր քորց-
ները, որոնց արդեցութիւնը շատ

գործի է լինում փափուկ մորթե-
րի վրա:

Ու Սլաքը, հաւատարիմ իր մի-
ջավայրի դաւանանքներին և
զգացումներին, ուզած չուզած
ինքզինքը անուղղակի կերպով
զգում է ծակտակու ուղղուած
քորցների հանդէպ և որոշ մի-
ջավայրի պաշտպանի գերը ըս-
տանձնելով շեղվում իր ճամբից
և այդպէսով միջոց տալիս փոք-
րիկ քորցին յաղթել սայրասուր
սլաքին ընկերական ու է լըն-
դիր լուծելու մէջ:

Ոչ հաճելի պարտութիւն բազ-
մահուտ Սլաքի համար, փոք-
րիկ Մինիի հանդէպ:

Նոյն այդ շարք յօդուածներ
մէջ իմ ուշագրութիւնը գրաւեց
և ինչ որ «հայ լայն» գտնակար-
գի գոյութիւնը: Մի դասակարգ,
որը ստեղծվել է Պոլսի զէվզէկ
մամուլի զէվզէկ ներկայացուցիչ-
ների երեւակայութեան մէջ ի
շարս վսեմաշուքների և վսեմա-
փայլների:

Հայերիս մէջ «հայ լայն»-ը
գոյութիւն չունի: Պոլսի զէվզէկ
ատլոյոշները «հայ լայն» են
անւանում դրամատէրերից և թը-
քական պաշտօնականներից կազ-
մված այն մարդին, որոնց կիները
մեծ մասով բարոյական ու մտաւոր
սմէնաստոր աստիճանի վրա են
կանգնում և իսկպէս կարող են
աշակերտել Պոլսի ամենաքոտտ
վարժապետին կամ վարժուհուն,
եւ եթէ աշակերտած լինէին,
գուցէ այսօր մի քիչ մարդկային
զգացմունքներ ունենային:

Յետոյ Սլաքը մի գիւտ է ա-
նում. այն է որ մեր մամուլի
մէջ հայ կանանց համար կար-
գաւու նիւթ չկայ, ու աւելի լաւ
է որ նրանք հայ թերթի չեն կար-
գում:

Այսօր ամբողջ աշխարհ հաս-


տատում է որ հայ մամուլը իր
բոլոր պակասութիւններով հան-
դերձ, ահագին բարոյականցնող
և կրթող ազդեցութիւն ունի, որ
այդ մամուլը ստեղծել է մի ան-
կախ, թըքական դաստիարակու-
թեան հետեւանքներից ազատ մի
սերունդ, և յանկարծ մեր կի-
ները այդ մամուլի մէջ կարգա-
լու բան չեն գտնում:

Այո, հայ բարեկեցիկ կիները
մեր մամուլի մէջ կարգաւոր բան
չեն գտնում, որովհետեւ նրանք
օսկեպատ իրամածիկներ են, ու-
րոնց գլուխներում ուղեղի տնդ
ճրագու կայ, իսկ ջղերի փոխա-
րէն ճարպոտ չւաններ: Կարծեմ
սրա հետ համաձայն կը լինի և
Սլաքը:

Վ.

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՅ ՈՒՍԱՆՈՂ ԱՎԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ



(Շրջաբերական-Նախկին)

Ընկերներ,

Երկու խնդիր կայ, կարեւոր ու
անտրոնական տեղական մարմինների
գործունէութեան համար, որի վրայ
ներկայ սեմստրին եւս՝ հրաւիրում
ենք Ձեր ուշագրութիւնը, — գասախօ-
սութիւններ հայոց հարցի մասին,
արւած եւրոպացիներ ձեռքով, և
պրօպագանդ մամուլի մէջ որ
պիտի անել նոյն իսկ հայ ուսանող-
ութեան անմիջական ջանքերով:
Ճարտք սկզբին սեղի ունեցած փոք-
ձերը, Ֆրանսիոյ զը Պրէսանսէի կոն-
ֆերանսը՝ ժընէվ, և էջարդ Բէր-
նշայնի դասախօսութիւնը՝ Բերլին
դարձեալ մի անգամ ապացուցին, որ
այդ տեսակ ձեռնարկ իրագործելի է
հնչուութեամբ, և կարեւոր իր հետե-
ւանքներով, Հետեւեալք այդ օրինա-
կին և կրկինք նոյն փորձերը:

Դասախօսութիւններ արդէն ծրա-
գրւած են հետեւեալ կենտրոններում
— Պարիզ, ուր լինելու է յունւար

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏԱՆՈՒՄԱՆՔԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐՏՔԸ

(Բանախօսութիւն է. Պեդ. Աբախյանի)

Այս թիւերն արդէն ինքնին ցա-
ւազինօրէն կը հնչեն մեր ականջնե-
րուն, բայց եթէ կարգաբայն սպա-
նութեանց նկարագրութիւնները, ե-
թէ իմանաք թէ ինչ պայմաններու
մէջ այրեք, կիներ, ձերեր եւ տը-
ղաքներ սպաննուած են, ինչ ան-
գթութեամբ և ինչ վայրագութեամբ
այդ ոճիրները տեղի են ունեցած,
ինչ նրբացած և զիւային յօշոտում-
ներ—որոնց միայն արեւելցիներու
մոլեռանդութիւնն ու գրգռուած կա-
րող են—ընկերացած են այդ սպա-
նութեանց, այն առեւ պիտի հասկ-
նաք թէ ինչո՞ւ անգլիացի պիտա-
կան մարդ մը, որ զգայնուտ մը չէ,
կրցեր է ըսել թէ Հայաստանի կոտ-

րածներուն տեսիլքը իր քունը կը
խոսվէր գիշերները:

Տղաքներ խողխողեցան ամենա-
մեծ վայրագութեամբ իրենց ծնողած
սէքին առջև, յի կիներու փորբը
ճեղքուեցան իրենց ամուսիններուն
նրկայութեանը, մարդեր յօշ յօշ
պատառուեցան անարգօրէն՝ սպան-
նուելէ առաջ:

Անշուշտ ֆուստփոլներուն կամ
վերապրողներուն գերագրգռուած
երեւակայութիւնը շատ չափազան-
ցութիւններ շրջաբերութեան հանե-
ցին, բայց եթէ նոյն իսկ այդ բո-
լոր պատմութեանց կէտը կամ երեք
բառորդը գեղջուի, դարձեալ պիտի
մնան շատ աւելի աներեւակայելի
անդ թութիւններ որոնց մարդ կա-
րենայ հանդիպել պատմութեան ըն-
թացքին մէջ: Կոտորածներու պա-
հուն կորնչողներէն դուրս քանի հա-
զարաւորներ վիրաւորուած են, քա-
նի հազարաւորներ ցատկի մահ մը
գտած են բանտերու եւ կարծեցիկ
հիւանդանոցներու մէջ, Ասիէց գատ,
թուրք զինուորները՝ իրենց սպանե-
րուն հետ համախորհուրդ՝ քաղաքներ

և գիւղեր թալլեցին եւ մոխիրի վե-
րածեցին զանոնք:

Պատմութեան տարեգիրներուն
մէջ որքան ալ հեռուն երթաւ փնտ-
ռու, չես կրնար գտնել ամբողջ ժո-
ղովուրդի մը գէժ գործուած այսպիսի
վայրենութեանց օրինակներ:

Եթէ յիշենք Սէն-Պարթէլը մի
գիշերը Բարիզի մէջ, եթէ մտա-
ծենք Տրոպէսայի գրաւման վրայ,
ուր Գրոմուէլի զինուորները գրեթէ
ամբողջ արու բնակչութիւնը կոտ-
րեցին, եթէ յիշենք Բարիզի մէջ
1792 սեպտեմբերի կոտորածները,
1848 յունիսի, 1871 թ արիւնալի կը-
ռուները, նոյն իսկ եթէ մտաբե-
րենք թուրքերուն գործած սպանու-
թիւնները Բիոսի մէջ, Լիբանանի
մէջ և Պուլկարիս, — այս ամէնը կը
նստմանան այն արիւնալի իրա-
ւանքներուն առջև որոնք տեղի ու-
նեցան Հայաստանի մէջ, Սուլթա-
նին պաշտօնատարներուն հովանիին
տակ կամ անոնց հրամանովը, ժողո-
վուրդի մը գէժ որուն միակ յան-
ցանքը եղած է զիմարդի ուղիւ հա-
րստահութեան մը որ վայրացու-

ցած է նոյն իսկ Եւրոպայի յետադի-
մական կառավարութիւնները, և
որ անշուշտ պիտի ըմբոստացնէ զգա-
լու տրամադիր ամէն մարդ:

Արդ, գտնուեցան մարդիկ որ,
նոյն իսկ այսօրինակ պարագաներու
մէջ, պարտք սեղեցին պաշտպանել
թուրքիսն և տարապայման չափա-
զանցութիւն յայտարարեցին՝ գործ-
ուած բոլոր գազանութիւնները:

Որովհետեւ այդ միջոցին կը սրտ-
մտէի մեր երկրին մէջ բողբոջ խօսք
մը բարձրացած չըլլալու ու իմ լաւա-
բոյն բարեկամներէս մէկը նամակ մը
գրեց ինձի որուն գլխաւոր կէտերն
էին, առաջին, թէ հայեր չկային
թուրքիոյ մէջ, եւ, երկրորդ, թէ
հոն գտնուած հայերը շատ երջանիկե-
րն և վերջապէս թէ թուրք պաշ-
տօնատարներուն գէժ ըմբոստացող
մտադոյ ամենքն ալ Ռուսիոյ գործա-
կալներն էին, կան մարդիկ որ,
Ռուսիոյ գէժ իրենց յոյժ իրաւաբոյ
ասելութեանէն կուրցած, թուրքերէ
պաշտպաններ կը կանգնին:

Թուրք կառավարութիւնն իր կող-
մէ յոյժ բնականաբար փորձեց ուրա-

ամսին մեծ միտինգ՝ մասնակցու-
թեամբ ակադեմիայի հայաստանցիները,
Բրիտանիայի Լիոն, ուր պիտի
խօսի Պրեմիերը, ժընեվ, ուր
այդ նպատակով գալու է Պիեռ Բիսպո,
Բեռլին, ուր հրատարակած են հոգա-
կայոր Բրանդիս ու դօքտ. Բօհրբախ
և Միլան, Լիպցիգ կամ Բալթիկ խորա-
պէս ցանկալի է համարում, որ նոյն
տեսակ դասախօսութիւններ տեղի ու-
նենան զէպի մեր խնդիրը անտարբեր
Պրեմիերին այնպիսի քաղաքներում
ինչպէս են Լայպցիգ, Միւնխեն,
Գրոնդապ, Զանք չենք խնայելու
կազմակերպել մի դասախօսութիւն և
Վիեննա, ուր այսպիսի փորձ
տարախառնաբար՝ դեռ չէ կատար-
ւած:

Մամուլի պրոպագանդը, որը նոյն-
պէս ցանկալի արդիւնք է խնայողութեամբ
զօր քրտործելի չէ ինչպէս կար-
ծում են մի քանի ուսանողական խմ-
բերուելու յարաբերութեան յետափո-
խական և քաղաքական օրգաններ,
հայերէն և ֆրանսերէն, որոնք առատ
նրով են պարունակում Հայաստանի
արդի կացութեան վրայ. և մեր դեր-
մասական ընկերները համար յատկա-
պէս դժուար չէ օգտուել այդ նիւթերից,
թարգմանել, յօդուածներ կազմել
և յարաբերութեան մէջ մտնելով ի-
րենց ապրած քաղաքների լրագիրներին
կամ հրատարակել այդ նիւթերը, Այդ
այնտեսանքը փոքր առ փոքր, անկա-
տելի, բայց հաստատուն կերպով կը
տարածի հայկական ողբերգութեան
և կուի գաղափարը այնպիսի շրջան-
ներում, որոնք մինչև այսօր մնացել
են անտեղեակ, անգիտակ և անտար-
բեր:

Աշխատե՛ք ընկերներ:
Մյու այնտեսանքը, սկզբում կա-
թիլ-կաթիլ և բաժան, կը լայնանայ,
կ'աճի և կը կազմի հասանքներ՝ ուժ-
գին, կենդանաբար: Հայկական ու-
սանողութիւնը, կազմած աւելի քան
400 հոգուց, հետու երկրից՝ անցոր է
կազմել մարտախոսք, բայց
կորով է կազմել բողոքախոսք մ. մ.
որ պիտի հնչեցնէ Եւրոպայի ակադե-
միան հարեմբիքի ողբը, ժողովրդի կս-
կիւր, կուղիների յոյսն ու յոյսը:
Աշխատե՛ք:
Յունւարի 1-ին (դեկտ. 49) լրա-

նում է Գրիգոր Արքեպիսկոպոս
10-ամեակը: Պարտք համարելով յար-
գել մի յուշահանդէսով այդ
տարեդարձը՝ խնդրում ենք ուսանո-
ղաշատ քաղաքների (Պարիզի, Բեռ-
լինի, Միւնխենի, Գրոնդապի Լայպ-
ցիգի և այլն) անդամները մարմիններին՝
ձեռնարկել այդ գործին, կազմել յա-
տուկ երեկոյթ-յուշահանդէս, նպա-
տակ դնելով ծանօթացնել հայ ուսա-
նողութիւնը՝ ակադեմիայի պարզիցիտի
կեանքին և գործունէութեան: Ժը-
նեվում նշանակւած է արդէն:

Ի գիտութիւն ուսանողութեան՝ նա-
զորքում ենք հետեւեալը:
1) Մինչև մի ամիս պատրաստ կը
լինի Հայաստանի քաղաքացի, հայա-
ստան, որը բացի հայկական ճ նա-
հանգներէր, կը պարունակէ Փոքր-Ա-
սիան և հարեան երկրները:

2) Մեծ-ժողովածուի խմբագրու-
թիւնը, որ կազմուած է Պարիզում,
յունաբեր ձեռնարկելու է հրատա-
րակութեան աշխատանքներին:

3) Պատրաստուած են յեղափո-
խական բողոքներ, ամենամատ-
չելի դնելով և երբեմն ձրիաբար մեր
ժողովրդի մէջ տարածելու համար:
Խնդրում ենք ձեռնահաս ընկերներին՝
մասնակցել այդ գործերին թարգմա-
նութեամբ:

4) Նանսիի ուսանողները նախա-
ձեռնող են ուզում լինել, հանգա-
նակութիւն անելու յօդուած քաղա-
քական հայ բանտարկեալների: Հրա-
ւիրում ենք բոլոր ընկերներին՝ աջակ-
ցել այդ համակրելի գործին:

5) Բերնշտայնի «Հայ ժողովրդի
տանջանքներ և Եւրոպայի պարտա-
ւորութիւնը» անունով բողոքը՝ գեր-
մաներէն տարածելուց յետոյ, ապա-
գրինց ֆրանսերէն լեզուով: Ցանկա-
ցողները թող դիմեն Լիպցիգի Կոմի-
տէին:

6) Կարգադիր Յաննաթողիւր խնդ-
րում է՝ ա) ընտրել աշխատակից ան-
դամներ յօդ. 26), բ) ուղարկել ու-
սանողների անուանացուցակը և ան-
գամաձգարները, գ) հաղորդել վի-
ճակագրական տեղեկութիւնները և դ)
ուղարկել այն նշանները, որ ստա-
րագրեցին 1902 թվի կոնգրեսի ժա-
մանակ:

Ընկերական բարեւերով
ԼԻՍՅՈՐ-ԿՕՄԻՏԷ
1902 զեկտեմբեր
Ժընեվ

ԹՐԳԱՍՆ ԳՈՐԾԵՐ

Կ. Պոլիս 20 դեկտ. (Պէսթ Ու-
էսթ) թիւ (ժողովուրդ). — մ'օյրա-
քաղաքիս օտար գեապանատու-
ներու մէջ լուր մը կը պատի,
լուր մը որ ամէնուն՝ զարմանք
կ'աղղէ և որն եթէ իրականանայ
շատ մեծ հաճոյք չի պիտի պատ-
ճառէ, կըսէ կարգ մը պետու-
թեանց կամ պետութեան մը. Այդ-
վրդով ի լուրը՝ այն է թէ Սուլ-
թան Ապտիլ Համիտը ձեռնար-
կեր է իւր «Յիշատակարանը»
գրելու: Սուլթանը այս միտքը
յղացեր է մանաւանդ այն հան-
գամանքին որ հայկական նահանգ-
ներու մէջ պատահած կոտորած-
ներու ժամանակ, Եւրոպայի մա-
մուլը իւր անձին զէմ խիստ լե-
զու մը բանեցուց և շատ մը ամ-
բաստանութիւնները ըրաւ նոյնիսկ
Սուլթանին նկատմամբ, Համիտ
այդ ամբաստանութիւնները ջրե-
լու և իւր ըրածները ուրիշին
վրայ նետելու համար է որ սկսած
է իւր կենաց պատմութիւնը գը-
րելու: Իսկ տեղեկ անձնա-
ւորութիւններ կը հաստատեն թէ
Սուլթանի «Յիշատակարանը» երբ
հրատարակելու շատ մեծ աղ-
մուկ պիտի հանէ որովհետեւ անոր
մէջ բազմաթիւ յայտնութիւններ
պիտի լինին:

Կը հաւատեն մասնաւորապէս
թէ այդ գրքին մէջ պիտի գտ-
նուին այնպիսի յայտարարու-
թիւններ և յայտնութիւններ ո-
րոնք բացարձակապէս պիտի հա-
կասեն այն գաղափարները և այն
ամբաստանութիւնները զորս եւ-
րոպայի քաղաքական անձ-
նաւորութիւնները կազմած էին
և են Սուլթան Համիտի մասին:
Բայց սպասելով թող հանգիստ և
անվրդով սրտով մնան զրպար-
ախնէ՞րը (*) և ակնարկուած

պետութիւնները կամ պետու-
թիւնը, որովհետեւ Սուլթան Հա-
միտի Յիշատակարանը լոյս պիտի
տեսնէ միայն... անոր մահէն յե-
տոյ. իսկ փատիշահը, հակառակ
մերի՛ ընդ մեր թ ստարածուած
լուրին, գեա բնաւ միտք չունի
այս աշխարհը թողելու:

Միլիթ Ս. Գալիք-Բեկ

ՅՍՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գարնշտայի հայ ուսանողու-
թիւնը յայտնում է, որ Հայալ-
բէրքում գտնուած հայ ուսանո-
ղական գրադարանը, որը նրա-
տակ ունէր ծանօթացնել և դիւ-
րութիւն տալ հայկական կեան-
քով, հարցով և գրականութեամբ
հետաքրքրուողներին, անպիտի-
ուէր է Գարնշտայի և միացել է
տեղւոյս հայ ուսանողութեան
գրադարանին հետ, շարունա-
կելով ծառայել իր նախկին նպա-
տակին:

Գրքերի թիւը առ այժմ շատ
չէ: Գրադարանի նպատակին հա-
մակողները կարող են օժանդա-
կել գրամական նուէրներով կամ
գրքերով հայ կամ օտար լեզու-
ներով գրուած:

Գիմումները և նուէրները անել
հետեւեալ հասցէով:

Գիմումիս Տարւոյիս
Սոյիս. Հ. Տնր - Խաչատրեանց
Էմիլ Սոյ. 27

ՄԱՆՈՒՑՈՒՄ

Յառաջիկայ երեքշաբթի օր,
Ս. Ստեփաննոսի տօնին, տեղւոյս
Աղգ. երկուս վարժարաններու
անուան տարեդարձին առթիւ
կատարուելիք հանգէսը դպրո-
ցական պատճառներով յետաձգ-
ուած է յառաջիկայ կիրակի:

նա: Թէ կոտորածներ տեղի ունե-
ցած էին, ասիկա չկրցաւ սակայն
հերքել, բայց զոհերուն թիւին վրայ
պարական թուանշաններ ցոյց
տուաւ համեմատելով անոնց հետ
զորս հիւպատոսները առած էին:
Տօքոս. Յովհաննէս Լէսպիոս,
Հայաստան ու Եւրոպայ անուն իր
գրքին մէջ (Պիւրիս 1897, էջ 60)
Թուրքիոյ պաշտօնական վիճակագիրը
կը բաղդատէ Եւրոպայիին հետ:
Այդ ցուցակը 1895-96ի սարսափի
պահուն սպանուած հայոց համար
հետեւեալ թիւերը կը յիշէ:

Թուրքիոյ ցուցակ	Եւրոպ. ցուց.
Էրզրոնկան	70
Բաղէ	130
Սարսիք	80
Արասիկ	200
Ամասիա	80
Վէզիր-Ֆէրի	38
Անիկապ	100
Մարաշ	30
	1390

Հոն ուր Եւրոպայի պատճառաբ-
ները կամ ճամբորդները ասան հազա-
րէն աւելի սպանութիւններ երեւան

կը հանէին, Սուլթանին պաշտօնիս-
նիւրը հաղիւ հազար հատ կը գտնէին:

Այսպէս կը տեսնէ թուրք կառա-
վարութիւնը ի կ. Պոլիս, այս դիտա-
կին մէջէն է որ ան կը նայի իր
գրեւորներուն գործած կոտորածնե-
րուն վրայ. իր աչքերը կը գոցուին
երբ խնդիրը ոճրի մը մէջ իր պա-
տասխանատուութիւնը հաստատելու
վրայ է. թուրք կառավարութեան
ակնմըները խուլ են յոստահապե-
թեան ազգակներուն, որոնք կու-
գան Հայաստանէն մինչև Վոսփոր:

Եթէ տէրութիւնները չեն ստիպած
Սուլթանին իր բարենորոգմանց խոս-
տումը ընտել, պատճառները բազմա-
թիւ են: Գլխաւորապէս, անոնք աղ-
ղուօրէն առաջ չեն մղած իրենց յան-
գիմանութիւնները, վասնզի հակա-
տական շահեր ունէին Արեւելի մէջ
որ դանտը կը չէր քաղցնէին փոխա-
ղարձաբար:

Ռուսիա այդ պահուն հարկ չէր սե-
պեր բռնել Սուլթանին օձիքէն, նը-
կատելով որ գործերը շատ աւելի ա-
ղկ կ'երթային եթէ Թուրքիոյ կա-
ցութիւնը մնար այն վիճակին մէջ

ուր կը գտնուէր ան, միւս կողմէ,
Անգլիա այն զօրաբութեանց հե-
տեւանօք զորս ունէր Հնդկաստանի
մէջ, ուր կուրի բռնուած էր հիւսիս
—արեւմտեան լեռնցի ժողովրդոց հետ
1895ին: Անգլիոյ մէջ, սզգատական
կառավարութիւնը հակառակորդ ե-
ղած էր Թուրքիոյ խառնակութիւն-
ներուն և քանիցս՝ սպառնացած էր
աւելի անկուս ընթացք մը բռնել
Սուլթանին հանդէպ: Պահպանողական
կառավարութիւնը երեւոյթը ունէր
այդ քաղաքականութիւնը աղանց
սեղմումի շարունակելու ուզելու, բայց
այդ թուականին ապստամբութիւն-
ներ ծագեցան Հնդկաստանի լեռնա-
յին գաւառներուն մէջ, ապստամ-
բութիւններ զորս կը քարոզէին մահ-
մետական միոնարներ. երթադրուե-
ցաւ թէ Սուլթանը մատ ունէր այդ
խոտովութեանց մէջ, և զոսիկա շատ
մօտէն նեղը խոթելուն մէջ վտանգը
կար տեսնելու Հնդկաստանի բոլոր
մահմետական ժողովուրդներուն հա-
մերախոթութիւնը Մարգարէի յաջոր-
դին հետ: Այս պատճառով է որ անգ-
լիական կառավարութեան ետանդը

հանդարտեցաւ:

Յրանաւ ու Գերմանիա Ռուսիոյ
հետ կը քաղէին: Սուլթանին կա-
ռավարութիւնը կը մտածէր թէ շատ
մտահոգելու պատճառ չունէր: Ամե-
նակեմ անտարբերութեամբ ընդու-
նեց բողոքները, և հանդարտօրէն
շարունակեց ջանջակել հօյնելու: Յա-
ջորդ ամիսներուն մէջ, բազմաթիւ
հայեր լուսի մահմետականութեան
մղուեցան:

1896 օգոստոսին, յետափոխական-
ները ուզելով աէրութեանց ցուցնել
փայլուն կերպով ժողովրդեան յու-
սաստանութիւնը, հայ յիզակոխա-
կանները յարձակեցան օսմ. պան-
քայի վրայ ի կ. Պոլիս: Պաշտօն-
եաները տապալելով Պանքան մօտն
և չէնքը գրաւեցին տէրութիւննե-
րէն կարուկ խոստաններ խլելու
յօյսով:

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՆԵՑՈՒԷԼԱՅՈՒ ԽՆԴԻՐԸ

Վերջապէս Վենեցուէլայի խնդրին լուծման գործն յանձնուեցաւ Լահէի իրաւարարական դատարանին: Այս պարագան թէեւ Միացեալ-Նահանգաց մէջ սփոփում մը առաջ բերաւ և նախագահ Ռուզվելթի իրաւարարին կնճուտ դերէն օձիքն աչառեց, սակայն դեռ շատ արգելքներու յաղթելու պէտք ըլլալը ակներև բան մըն է:

Գերմանիա կը շտրունակէ խոչընդոտներ յաշուցանել: Կըսուի թէ ան միշտ կը պահանջէ 1600000 ֆր. անմիջական վճարումը՝ իրաւարարական շրջանակէն դուրս, բայց վերջին պահուն յայտարարեր է թէ ետ կը կենայ այդ պահանջումէն, կը բաւէ որ երաշխաւորութիւններ տրուին իրեն: Ռուզվելթի մասին իր առաջարկած իրաւարարի գերը յաջողած չըլլալով, հիմակ նորէն երաշխաւորութեանց հարցը սրեւան կը հանէ, բան մը որ, Վենեցուէլայի ներում խնդրելու պայմանին հետ միանալով, կրնայ երկարաձգել խնդրին կարգադրութիւնը:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը Պ. Ռուզվելթի մերժումը իմանալով ցաւ յայտնեց է, որովհետեւ այդ ճամբան է՛ն կտրուկը կը նկատէ եղեր:

Միացեալ-Նահանգները իրենց չէզոքութիւնը շեշտելու համար կը յայտարարեն թէ ոչ միայն գլխաւոր դերը չեն ստանձներ գործին մէջ, այլ և ոչ յիշատակողը կը բանաձեւեն ոչ ալ բանագնացութիւնները կը վարեն: Բայց և այնպէս հեռուանց կը հետեւի անոնց ընթացքին և յոյսը դրած էր Անգլիոյ վրայ, որպէսզի այս վերջինը յաջողի համոզել Գերման կառավարութիւնը ետ առնելու իրաւարարութեան մասին դրած պայմանները: Երոնք կրնան եթէ ոչ ձախողել գէթ յապաղեցնել խաղաղական լուծումը:

Գալով Գասթրօ նախագահին, թէեւ ան նախամեծար կը համարէր պ. Ռուզվելթի միջամտութիւնը, սակայն շատ փոյթը չէ իրաւարարութիւնը, նկատելով Վենեցուէլայի դատին արգարացիութիւնը: Գերմանիոյ պէս, ինք ալ պայման կը դնէ յիշատակագրին ստորագրութեանը՝ պաշարման անմիջական բարձումը:

Իրաւարարական յիշատակագիրը պիտի տրամադրէ՝ որ Լահէի դատարանին վճիռը վերջնական պիտի ըլլայ, պայմանով որ Վենեցուէլա հաւաստէ թէ պիտի ընդունի զայն և թէ սերութեանց պահանջումներուն ըսկզբունքը կընդունի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Թուրք կառավարութիւնը մեծ անհամբերութեամբ կապուէր Լամատորֆի Կոլոխովսքիին հետ ունեցած տեսակցութեան հետեւանքին:

Բ. Գուռը մեծ վախ ունէր որ եւրոպական պետութիւնները ազդու կերպով միջամտեն մակեդոնական գործերուն:

— Գերմանական թերթ մը կը հաղորդէ թէ քանի մը օրէ ի վեր մակեդոնական բոլոր նահանգներուն մէջ սկսած են քրիստոնեաներուն ոստիկանութեան պաշտօն տալ, կսուի թէ ամբողջ ոստիկանութեան մէկ քառորդ մասը քրիստոնեաները պիտի կազմեն: Վարչութիւններու մէջ ալ մեծ թուով քրիստոնեաներ ընդունուած են:

— Պոլսոյ դիւանագիտական շրջանակներու մէջ կը խօսուի որ միջազգային յանձնաժողով մը պիտի ընտրուի, որուն նպատակը պիտի ըլլայ հսկել բարենորոգումներու իրագործումը:

— Մակեդոնիոյ դատական հաստատութիւնները բարենորոգելու համար Թուրքիոյ արգարագատութեան նախարարը մէկ միլիօն ու կէս ֆրանք պահանջեց է Բ. Գուռէն:

ՊՈՒԼԿԱՐԻՍ. ՄԱԿԵՂՈՒՆԻԱ

Կենթագործի որ ելեմտից հաշուեկշռի մասին ըլլալիք վիճաբանութիւնը պիտի յետաձգուի: Երեսփոխանները պիտի ցրուին տօներու համար:

— Խաթար-Բաղարճրդի մակեդոնական կոմիթէն կուգէ նախաձեռնարկ ըլլալ արտակարգ կօնգրէս մը կազմակերպելու:

— Կը լսուի թէ մակեդոնական յեղափոխական կուսակցութիւնները միացնելու համար կազմուած հաշտարար յանձնաժողովը իր բարի նպատակին չը պիտի կրնայ հասնիլ:

— Սարաֆօվիստները Լամատորֆի խորհուրդներուն կարեւորութիւն տալու մտադիր չեն:

— Սօֆիայի մէջ. Լամատորֆ կոմս իր պաշտօնին վրայ զինք հարցափորձող քաղաքական մարդոց պատասխաններ է թէ իր հետ ոչ մէկ ծրագիր կը բերէր, թէ մանաւանդ կուգար Իշխանին ու կառավարութեան հետ խորհրդակցելու: Եթէ հարկ ըլլար որոշումներ տալ, Վիեննայի ուղեւորութեանէն յետոյ պիտի ըլլային:

Այս յայտարարութիւնները բաւական յուսալարութիւն պատճառեցին և մակեդոնացիներու

չըջանակներուն մէջ: Այսպէս խօսելով՝ ռուս նախարարը ուզեր է անգամ մը եւս ցուցնել կայսերական կառավարութեան հաստատ կամքը երբէք չնպաստաւորել ան խոհեմ ձեռնարկներ, և հաստատել 1897ի Աւստրիոյ հետ համաձայնութեան ամրութիւնը՝ Պալքաններու մէջ «սթաթիլի քոնօրին» և խաղաղութեան պահպանումին համար:

Ընաց որ Լամատորֆ կոմսը բացէ բաց ըսնէ թէ մակեդոնացիները իրենց յուզումներովը պէտք չէ որ վրասեն այն դիմումներուն զորս երկու կառավարութիւնները մտադիր են առաջ տանիլ Պոլսոյ մէջ:

— Սուլթանը ուղղակի իրեն ներկայացնել կուտայ Մակեդոնիոյ դէպքերուն վերաբերեալ տեղեկագիրները: Ետ մը բարձրաստիճան պաշտօնատարներ պիտի հրաժարիցուցուին հաստատած ըլլալուն թէ Մակեդոնիոյ մէջ խաղաղութիւնը կատարեալ է:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

«Թանաք առաջնորդողը մը կը յայտարարէ որ Լամատորֆի տեսակցութիւնները Վիեննայի մէջ որչափ ալ նշանաւոր երեւոյթ մը ունենան, այսու ամէնայն չը պիտի բաւեն արեւելեան խնդրը կարգադրելու, որուն մէջ առաջին տեղը կը բռնեն հայկական և մակեդոնական խնդիրները: Այդ գործը գլուխ բերելու համար անհրաժեշտ է բոլոր մեծ տէրութիւններու համաձայնութիւնը:

— Ումբերա նշանաւոր ընտանիքը— տօլանտրօն— արդէն Բարիզ բերուած է: Ոստիկանութիւնը այնպիսի միջոցներ ձեռք առած է եղեր, որ Բարիզի մէջ շատ քիչերը իմացեր են այդ հանճարեղ շարլաթներուն գալուստը:

Ուրեմն ֆրանսական կառավարութիւնը զգասեցաւ խոշոր հոգս մը եւս, որ մեծ զէնք դարձած էր հասարակապետութեան հակառակորդներու ձեռքը:

Ա Ի Ս Տ Ր Ի Ս

Վիեննայէ կը հեռագրեն որ Լամատորֆ պիտի տառաջարկէ եւրոպական յանձնախումբ մը կազմել Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու համար:

ՌՈՒՄԱՆԻԱ

Մերակոյաններու ժողովը միաձայն ընդունեց ի պոլիար սուլմանական վաճառանական գաշնագրութեան սեւուած միջոցներ 1904ի յունուար 1ը:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԻՍ

Ինչպէս չորեքշաբթի օր ծանուցինք, կիրակի գիշեր չքեղ ներկայացում մը կայ Սանդրայի թատրոնը, Պապական թատերախումբը պիտի սկսի շարքը Մոնթէ-Քրիսթօ Կոմսին ներկայացումներուն, որոնց շահեկանութեան մասին խօսիլն իսկ աւելորդ է:

Բայց ինչ որ ամէնէն աւելի հրապուրելի կը կացուցանէ սոյն երեկոյթը, այն բացառիկ պարագան է, որ ծանօթ հայ երգիչ պ. Ն. Օղոստինեան միջնարարներուն պիտի հնչեցունէ իր հզոր ձայնին սրտաթունդ խոզերը:

Վառնայի թատերասէր հասարակութիւնը պէտք չէ որ այս յոյժ գեղեցիկ տոթը ձեռքէ վախցնէ՝ գեղարուեստական ժամանցի մը այս սպաւորիչ վայելքին համար:

ԿԸ ՓՆՏՈՒՄ

Պապը Ալիի ցոյցէն ի վեր անյայտ եղած է ընդիմադրական Գէորգ Կ. Ալեանաքեան անուն երիտասարդը: անոր մասին տեղեկութիւն ունեցողները թող փութան հաղորդել խմբագրութեանս:

ՔՈՒՉԱԿ

Նահապետ Գուշակի առղերը պարունակող գիրքը որուն կցուած է նաեւ Ա. Չոպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը, կը ծախուի Զարպանէլեան գրատունը Վառնա Գիւնէ՝ պարզ թղթէ գիրքին 3 ֆր. Գուշէ: Կարծէ որ ամէն բանասէր և հայ գրականութեան սիրահար անձ ունենայ այս գրքէն որ ճշմարտագէտ զբաղական գոհար մըն է:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Տ Ր Ի Ս

Ա. Չ ա Ր պ ո ս և և Կ շ և ս և ի

Պատիւ ունիմ ծանուցանել Պուկարիոյ և Ռուսմանիոյ Հայ ժողովուրդին այս անգամ աւելի ճոխացուցած եմ Գրատունս: Ամէն տեսակ զարգացական և վիպական գրքեր և օրացոյցներ ունիմ պատրաստ:

Հայկական քարդ փոսթալ հասը 10 սանթիմ:

Հայկական ընդարձակ երգարան հասը 2 ֆր.

Ամերիկայի ընդարձակ երգարան հասը 5 ֆր.

Հասցէ՝ Ա. ՉԱՐՊԱՆԷԼԵԱՆ (Պուկարիա) Վարնա

ԻՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԻՔԸ

Գրեց անգլիացի Ուիլիամ Ուոլթըրի բանաստեղծը և հայերէնի թարգմանիչը Ստորով. կը ծախուի խումբ սանթիմի դիմել թարգմանիչին՝ Մ. ՍՐԲԷՆ ԱՐՏՈՆԶ

43 Տուլիա Րուս Միսսոն (Անկղղիտ) Եւ կամ Ռուսիէն Գուսպուսովսկայի վրոնա

Отговорникъ Мурадъ Ераносянъ

Печатница „Възвѣстность“, Варна